

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՉԸ

ԲԱԶՄԱՎԷՊԸ՝ զանազան անգամներ առիթ ունեցաւ գնահատելու, անկուսակցութիւն, զօրավար Անդրանիկի լուրջ գործունէութիւնը, անոր անձնատուէր եռանդը... Այժմ ես հաճոյքով կը խօսինք նոյն կարկառուն դէմքի մասին, արձագանգելով իւր քարքառը:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներուն, քաջակորով ակոյեանը՝ յետ «գանձնի վերայ հայրենեաց զնել»ու, ե զինագազարէն ետքը Գաղղիայ անցնելու, (ուրտեղ ես իւր ազգօգուտ արդիւնքներն ունեցաւ), ապա գնաց Անգղիայ ե հանգուռաւորպ ե հանրածանօթ նպատակով գործեց:

1919 Հոկտեմբեր 9ին գրած է, ի Մանչեսթր, իւր կոչը Հայութեան. Նրա՛ն՝ անդրադարձնելով որ «կը մօտենայ Արարութեան ե Հատուցման ժամը», նա կը յաւելու թէ «պէտք է հայութիւնը պատրաստ ըլլայ իր ամբողջութեամբ, — կովկաս, Ռուսաստան, Տաճկահայաստան, Կիլիկիա, Եգիպտոս, Պոլսոյ՝ Բալկանեան երկրներու՝ Արեւմտեան Եւրոպայի ե վերջապէս Ամերիկայի գաղութները»:

Նա կը շեշտէ որ Հայ ժողովուրդը ե իւր Ներկայացուցիչները կը պարտին իրար վրայ փոխադարձ համարումն ունենալ ե այնպէս աներկբայ վստահօրէն ընթանալ, նա կը մատնանշէ միութեան ե համերաշխ գործունէութեան հարկը՝ որով միայն կարելի է ապահովել Ազգային Ազատագրութիւնը:

«Կոչ կ'ընեմ՝

Ա. Երկիր թէ Արտասահման գտնուող բովանդակ Հայութեան, բոլոր կուսակցութիւններուն, միութիւններուն, ազգային այս նշանակալից օրերուն ըլլալ միաբան, համերաշխ: Ոչինչ այնքան չպիտի նըպաստէ մեր Դատի յաջող լուծման, ինչքան մեր միաբան արտայայտութիւնները, կուսկամբը ե համերաշխ գործունէութիւնը:

Մասնաւորապէս կոչ կ'ընեմ Հայ Մա-

մուին ըլլալ զգաստ, չափաւոր ե ներդաշնակ: Թող լաւ գիտնան որ Պողոս Նուպար փաշան կամ Ահարոնեանը քննադատելով Ազգային Դատին օգուտ մը բերած չեն ըլլար. ընդհակառակը այդ Դատը կը տուժէ:

Բ. Արտասահմանի Հայութեան՝ ինչքան կարելի է շուտ կազմակերպել օգնութիւն՝ Հայաստանի վերապրող ժողովուրդին ե Երկիր ուղարկել հազուստեղէններսի թէ զուրսի, կօշիկ, օճառ, դեղօրեայք ե սննդեղէն:

Նաե կազմակերպել ե ժամանակին հասցնել երկրագործական օժանդակութիւն, գործիքներով, մեքենաներով, լծկան ե կթան անասուններով ե մանաւանդ սերմնացուով:

Այս է ահա Ազգի Ազատագրութեան համար նահատակուողներու կտակը ե վերապրող նահատակուողներու կտակը ե վերապրող նահատակ հերոս ժողովուրդի Զայնը:

Թող ամէն մէկը կատարէ իր Պարտքը: Միաբանութիւն ե Օգնութիւն:

Հեռու անարդիւնք վէճերը.

Դէպի Միութիւն, դէպի վերաշինութիւն.

Դէպի փրկարար Գործ »:

ԱՆԴՐԱՆԻԿ

Յ. Գ. — Կը խնդրուի բոլոր Թերթերէն արտաստել սոյն կոչը:

Ըստ այդմ՝ Արտասահմանի Հայութիւնը կը պարտի «աւելի քան երբէք» այժմ օգնել (նաե նիւպապէս՝ ու առատաձեռնութեամբ) տառապանքի մէջ վերապրող հայ ժողովուրդին: Չէ՞ որ ազգակիցներս առաւելեալ պարտք մ'ունինք. ինչո՞ւ չփութանք մեր անհատական ու ցեղային վարկն ալ բարձրացնել: Օտարները կը ճակն օժանդակելու, — իսկ մե՛նք, — գէթ ջանանք մրցակցելու անոնց հետ...

Հ. Գ. Ա.